Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ Կոտայքի մարզի «Աղավնաձորի Զ. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր տեղերի համար

-Հայաստանի պատմություն-5 դասաժամ

-Իմ հայրենիքը-3 դասաժամ

-Հայոց լեզու/5 դասաժամ/ և գրականություն/4 դասաժամ/

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. դիմում/Ձև 1/, մեկ լուսանկար 3x4 չափի

2.բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ/

3.անձը հաստատող փաստաթուղթ

4.Ինքնակենսագրություն/Ձև 5/

5.«Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը/առկայությանդեպքում/

6.այլ պետությունների քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ

7.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ

8.հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ/առկայության դեպքում/

9.որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները հետ վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 2-ից սեպտեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 16-ին, ժամը 14:00-ին Աղավնաձորի Զ. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Կոտայքի մարզ, գյուղ Աղավնաձոր, 2-րդ փողոց, 2-րդ շենք:

Տեղեկությունների համար զանգահարել 093033840, 077930210 հեռախոսահամարներով: